

վարութիւնը Անիում աւելի նշանաւոր հետքեր թողեց։ Նա շինեց քաղաքային պարիսպները, որ աւելի ընդարձակ օղակով են շրջապատում Անին քան Աշոտի պարիսպները։ Այդ ակներև ցոյց է տալիս քաղաքի արագ և անշեղ աճելութիւնը։ Կարսը գրաւելու անյաջող փորձն և Վրաց Բագրատ թագաւորի ու Տայոց կիւրապաղատ Դաւթի Աբխազների թագաւորի դէմ պատերազմներին մասնակցութիւնը աղդեցութիւն չունեցան Անիի արտաքին բարօրութեան համար։ Սմբատի յանկարծական մահը (990 թ.), որ համարւում է երկնային պատիժ նրա ծանր չարագործութիւնների համար, մայրաքաղաքի դռները բաց արեց Սմբատի եղբայր Գագիկի առաջ, որը մինչև այդ՝ իրաւունք չուներ Անի մտնելու։

Գագիկ Առի ժամանակ (990—1022 թ.) Անիի թագաւորութիւնը հասաւ ամենածաղկեալ դրութեան։ Իւր ուժին վստահ Գագիկը, որին պատմիչները նկարագրում են որպէս կարող, քաջ, պատերազմասէր, և յաջողակ ոք, թոյլ տուեց իրան արհամարհել մինչև անդամ Բիւղանզանդիայի հղօր կայսր Վասիլ Բայ բարեացակամութիւնը, Գագիկը նրան ընդառաջ չգնաց, երբ արևելեան միւս տիրողները աճապարում էին նրան երկրագելու՝ երբ նա ճանապարհորդում էր արևելքում և պատիւ էին համարում ընդունել նրա շնորհած պալատական տիտղոսները։

(Հարունակելի)

Թարգ. Յ. Ա. Ե.



ԲԵԼՂԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈԼԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱԽՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարօնակուրին

Դեռ Քէօլն չըմտած արդէն երեսւմ է Հոլլանդը՝ մարդկութեան քարիք այդ զետը և առանձնապէս՝ Քէօլի աստուածը։ Գրաւուած զետի աղդող տեսքից և հեռուից նշմարելով նրա ափից քիչ հեռու զտնւող մինչև ամսղեր բարձրացող մի հսկայական տաճարի զոյգ

զմբէթները, կայարանում իջնելուն պէս շտապում ևմ դէպի այդ կողմք։ Դիչ յետոյ արդէն Հոհնոսի ափին ևմ։

Հոհնոսը հոսում է Քէօլիի հարաւային մասով։ Քաղաքը ընկնում է զետի ձախ ափին։ Միայն երկու կամուրջ է կառուցած։ այս արդէն ցոյց է տալիս, որքան մեծ է Հոհնոսը։ և ինչու Քէօլիի մօտ նրա վրայ միայն երկու կամուրջ կայ։ Այդ կամուրջներից մէկը երկաթից է և նոր ժամանակի ցործ։ Նա ծառայում է գլխաւորապէս երկաթուղային հաղորդակցութեան։ Երկրորդ կամուրջը պատմական է։ սա յիշեցնում է պարսիկների և յոյների կոփւը Դարեհի ժամանակ, Հնդկական աշխարհը։ Այս կամուրջը կոչւում է նաւակամուրջ։ Հաւասար մեծութեան բաղմաթիւ նաւակներ ամրող դիտի լայնութեամբ կողք-կողքի շարել են, իրար հետ միացրել և երեսը տախտակով ծածկել։ Ստացուել է մի լողացող, անընդհատ օրօրւող կամուրջ։ Այս ծառայում է մարդկանց, կառքերի և սայլերի երթեւկութեան։ Բացի կամուրջներից, կան և շատ նաւակներ, որոնք հեշտացնում են մի ափից միւսն անցնելը։

Հոհնոսի ափից քիչ հեռու, գլխաւոր կայարանի յանդիման կանգնած է Քէօլիի հրաշալիքը, նրա աշխարհանոչակ տաճարը։ Մի հոկայական շինութիւն, որը իւր տեսակում եղակի է։ Ես անգօր ևմ նկարագրել այս տաճարի դեղեցկութիւնը, անհնման ոճը, մարդկանց վրայ թողնող տպաւութիւնը։ Եւ դրա համար ես այս ուրիշից ևմ փոխ առնում։ Ճիւրաքանչիւր բարի մարդ աղօթում է իր Աստծուն։ Նա սակայն կամենում է տօն օրերին այս իւր բարեկամների հետ միասին կատարել։ Երբ հին դերմանացիները դեռ իրենց հեթանոս աստուածութիւններին էին պաշտում, նրանք հաւաքւում էին սովորապէս սրբազն անտառակներում կամ հինաւորց անտառների մէջ և այստեղ իրենց աստուածներին զոհ էին մատուցանում։ Բայց երբ յետոյ նրանք քրիստոնեայ դարձան, սկսեցին իրենց համար գեղեցիկ և կեղեցիներ կառուցանել։

Ամեն ժողովուրդ կառուցանում է իւր եկեղեցիները և տաճարները ըստ իւր սեփական ճաշակի։ Գերմանացիները իրենց եկեղեցիները կառուցանելիս ընդօրինակում էին հոկայական անտառին։ բարձր դռներ, բարձր լուսամուտներ, երկարաձիգ սիւներ, բարձր կամարներ և տանիքներ և կից զմբէթը էլ աւելի բարձր՝ մէկ հոկայական մայր ծառի նման, որն ամենից անցնում է։

Իրենց սեփական բնակարանները կարող էին փոքր լինել, իրենց սենեակները նեղ և ցածր։ Բայց երբ նրանք միասին սիրելի Աստծուն յիշել էին կամենում, ինչպէս մեծ է նա, ինչպէս բարձր է նրա երկինքը, ինչպէս մեծ է նրա հզօրութիւնը և սէրը—այն ժամանակ ամենամեծ տունն անգամ թւում է ոչ բաւական մեծ։ Այս գերմանական բոլոր եկեղեցիներից ամենամեծը և ամենազեղեցիկը,

Քեօլնի տաճարը Հոննոսի ափին, է այնքան փառահեղ, որ նա մի-
այն մեր օրերումն է պատրաստուել, վերջացել, մինչդեռ նրա վրայ
շատ հարիւրաւոր տարիներ են աշխատել: Կառուցման եղանակը,
որը դործադրուել է դրա վրայ, կոչւում է զոթական ոճ:

Քեօլնի տաճարը, ինչպէս և զերմանական հին եկեղեցիների
մեծամասնութիւնը, խաչի ձև ունի Սեղանը գրանւում է դէպի ա-
րեւելք, որովհետեւ այզտեղ է դանւում այն երկիրը, որտեղ Փրկիչը
ծնուել է: Միւս ծայրում բարձրանում են, նման երկու հսկայական
մայր ծառի, երկու հսկայական դմբէթներ մինչի ամպերը: Իրենց
կողքերի վրայ նրանք կրում են մի բազմութիւն ատամների և սուր
սուր ծայրերի: Տանիքի շուրջը գտնւում են նոյնպէս ատամներ
և սուրսուր ծայրեր, ծառի զաղաթի նման, այնպէս որ մարդ իսկապէս
այն տպաւորութիւնն է ստանում, որ նրա առաջը դանւում է մի
անտառ երկու հսկայական մայրերով, որոնք ամենից անցնում են:

Ներքուստ տաճարը փառահեղ զարդարուած է: Առաքեալնե-
րի, սրբերի և այլ բարեպաշտ մարդկանց սիւնարձանները կանգնած
են երկար սիւների վրայ, սեղանի վրայ դրուած է Փրկչի նկարը,
իսկ բարձր առաստաղից դէպի ցած են նայում հրեշտակների սի-
րալիր գլուխները: Հսկայական կամարածե լուսամուտներից լոյսը ներս
է հոսում: Ծնորհիւ լուսամուտների մեծութեան եկեղեցու ներսում
աւելի լուսաւոր կըլինէր, և մարդիկ դուցէ աւելի իրենց գործորի,
քան թէ աղօթքի և քարողի մասին մտածէին: Դրա համար ապա-
կիները նկարուած են: Փառահեղ նկարները շատ զեղեցիկ գոյնե-
րով, դէպքեր սրբազն պատմութիւնից հրապուրում են աչքը և
միաժամանակ յետ են դարձնում օրուայ պարզ լոյսը: Այսպէս ա-
ղօթաւորներին ոչոք չի խանդարգում: Երգեհոնը նուազում է և
ուժեղ կերպով տարածւում է կամարների ու սիւների տակ, աւելի
զեղեցիկ կերպով: քան առաջ, երբ հին զերմանացիները անտառում
աղօթելու հաճար հաւաքւում էին: Քարողիչը խօսում է սեղանից և
ամբիոնից, և աման ոք կարող է նրան լսել: Եթէ նոյն իսկ տաճարի
հսկաղիր ծայրում դանուի, որովհետեւ զարմանալի պարզ կերպով
ձայնը տարածւում է: Վերե, բարձրում չորս կողմով տարածւում է
մի վերնատուն, որը ցածրից հազիւ է նշմարւում: Ուշ կամենում է
տաճարի բարձրութեան մասին մի բաւական ուղիղ զաղափար կաղ-
մել, թող այնտեղ բարձրանայ: Նայում էք վերեից դէպի ցած՝ աղօ-
թաւորներին, որոնք ներքենում հաւաքուած են, նրանք երեսում են
շատ մանր: Հոգեորականի ձայնից ոչ մի հնչիւն չի հասնում այս
բարձրութեան: Մէկ սովորական եկեղեցի կարողէ տաճարի մէջ
տեղաւորուել և այդ եկեղեցու դմբէթի ծայրը չի կարող նրա առա-
տաղին հասնել: (Franz Otto, Deutsche Geschichten):

Քեօլնի տաճարը մի կանգուն արձան, թանգարան է ուշ զո-

թական ոճի: Թէ ներքուստ և թէ արտաքուստ նա ներկայանում է արուեստի, ձարտարապետութեան մէջ մի կատարեալ դործ: Տաճարի գեղեցկութիւնը ներդաշնակում է նրա մածութեանը, բարձրութեանը և առանձին խորհրդաւորութիւն տալի նրան: Այս տաճարի հիմքը դրուել է 1248 թուականին և աւարտուել է 15 դարու վերջերքին, թէ ոչ ամբողջովին: Ամբողջ շինութիւնը բռնում է մօտ 6166 քառակուսի մետր տարածութիւն: Խոկ զմբէթների բարձրութիւնն է մօտ 156 մետր:

Բաւականին գեղեցիկ է և Քեօլնի քաղաքային խորհրդարանը: Ընհանրապէս Քեօլնը ունի շատ յայտնի շինութիւններ, պատմական յուշարձաններ: Հառմայեցիներից հիմնուած այս քաղաքը (Colonia Agrippinensis) դեռ մինչև օրս պահել է պատմական շատ յիշտակարաններ: Քեօլնին առանձին դիրք և փայլ է տալիս Հռենոս գետը: 'Իսո հնումը շնորհիւ այդ գետի Քեօլնը քաղաքների մէջ առաջինն էր և Հանգայի հզօր դաշնակիցը: Մի ժամանակ Քեօլնը առնտրական մեծ յարաբերութիւն ունէր զանազան կենդրունների հետ, մանաւանդ Անգլիայի: Հենց նրա այդ փառահեղ տաճարը իւր ծաղկեալ ժամանակից է, որը և վկայում է՝ թէ որքան հարուստ, ճոխ է եղել այդ քաղաքը: Բայց Ամերիկայի զիւտից յիտոյ, ովկեանոսային հաղորդակցութեան սկսուելով, նա կորցնում է իւր նշանակութիւնը: Այսօր նա ամենից շատ յայտնի է իւր «Քեօլնեան ֆրի» արտահանութեամբ: (Eau de Cologne):

Շրջելով Քեօլնի փողոցներով, որոնք բաւականին տարօրինակ են, ացնելով եպիսկոպոսապատկան այս քաղաքի պատմական շինութիւնների առջեցից, մարդ պահ մի զկում է. թէ անցեալումն է ապրում: Ինձ վրայ զո՞նէ խիստ ազդում, իմ մէջ անչափ յոյզեր էր առաջացնում Հռենոսը: Կանգնած պատմական այդ գետի ափին, յուշերով տարուել էի պատմութեան մութ, խաւար դարերը: Առաջես պատկերանում էր կեսարի, Տակիտոսի և այլոց նկարագրած Գերմանիան: Երեակայում էի հին գերմանացիներին մորթիններ հագած, քարէ կամ փայտէ դէնքերով Հռենոսի և էլբայի ափերին թափառելիս: Ես յիշում էի վայրենի թափառական գերմանացիններին և համեմատում նոր երիտասարդ գերմանացիների հետ: Համեմատում էի և նախանձում: Նախանձում էի գերմանացիներին, առաջիս պատկերացնելով իմ հայրենիքի տխուր վիճակը:

Մի ժողովուրդ, որ աւելի առաջ էր կուլտուրայով քան գերմանացին, մի ժողովուրդ, որը մի ժամանակ ունէր իւր ծաղկեալ վիճակը, մինչդեռ գերմանացին թափառական, վայրենի կեանք էր վարում, այսօր որքան հեռու, յիտ է մնացել գերմանացուց:

Ցիշելով մեր ժողովրդի դարերի ընթացքում կրած անօրինակ ձախորդութիւնները, ես զայրոյթով լցում էի զէպի իմ նախնիքը,

որոնք այնքան անխոհեմ էին դժոնուել, իրենց համար այս տեսակ մի երկիր հայրենիք ընտրելով։ Ի՞նչու, ի՞նչու, նրանք էլ չաշխատեցին Եւրոպայում մի կտոր հող ձեռք բերել, որ մենք էլ՝ ազատ քարքարուներից, անվերջ աւերումներից, թալանից, մարդկութեան ցոյց տայինք, որ ազգ ենք և նախանձախնդիր մարդկութեան յառաջադիմութեան, այն էլ մեծ չափով։

Մոնղոլական ծագման պատկանող հունգարացին, ֆիննը մեր օրերում աշխարհի հիացման առարկայ ևն իրենց յաջողութիւններով յառաջադիմութեամբ, իսկ մենք, որ մարդկութեան աւելի ազնիւ արիւնից ենք սերուած, Եւրոպայից դուրս ընտրած լինելով մեղ համար հայրենիք, մինչև օրս էլ կրում ենք մեր հարեանների պատճառաւած տանջանքների ծանր խաչը……

Այս տեսակ մտածմունքների մէջ խորասուզուած, ևս վերջին հրաժեշտ եմ տալիս Քեօլնին և ճանապարհա շարունակում։ Քեօլնի շրջանից դուրս դալով, բնութիւնն աստիճանաբար փոխում է և աւելի զրաւիչ է դառնում։ Հետզհետէ երեսում ևն անտառներ, ձորեր, փոքրիկ բարձրութիւններ։ Մօտենալով Ախէն քաղաքին, բնութիւնը աւելի գեղեցիկ՝ զրաւիչ է։

Ախէնում մարդ իրեն զգում է, որ արդէն շուրջն այլ բնութիւն է տարածւում։ Եւ այդ առաջուանի համեմատութեամբ շատ զրաւիչ, հրապուրիչ է։ Շատ սիրուն է Ախէն քաղաքի դիրքը։ Թէպէտ նա գերմանական քաղաքներից շատ յետ է մնացել իւր առետրով, շինութիւններով։ Կեանքով բնդհանրապէս, բայց բնութեամբ խիստ զեղեցիկ, զրաւիչ է։

Ախէնը մի ժամանակ յայտնի վառք է ունեցել։ Եա եղել է ֆրանկոնեան թագաւորների մայրաքաղաքը։ Առանձնապէս կարլոս Մեծը շատ էր սիրում այս քաղաքը, այժմ էլ նրա դին ամփոփուած է քաղաքիս մայր տաճարում։

Ախէնում մարդ զգում է, որ դուրս է դալիս Գերմանիայից։ Փողոցները, խանութների զասաւորութիւնը, կարդ ու կանոնը, աների պատուհանների զարդարանքները, մարդկանց վարուելու եղանակը, լեղուն, այս բոլորը ցոյց են տալիս, որ այսուղ այլ կեանք է տիրում, և որը խիստ տարրերւում է բուն գերմանականից։ Այստեղ տիրում է կաթոլիկ աշխարհը։ Այդ վկայում ևն փողոցներով անցնող սեազգեստ կաթոլիկ հոգևորականները, իրենց անձունի զլիարկներով և ածիլած դէմքով։ Այս քաղաքում ամեն վուղոցի ծայրին կամ տան ճակատին կարելի է տեսնել մետաղից կամ փայտից ոլատրաստուած քրիստոնի խաչելութիւնը կամ մայր Աստուածածինը պատերից կախած։ Ես կաթոլիկ աշխարհում չեմ եղել և Քեօլնից յետոյ Ախէնը երկրորդ կաթոլիկ քաղաքն է։ Բայց վերջինս աւելի բնորոշ է։ Բաւական հետաքրքրուած կաթոլիկներ-

բով, ևս շատապում եմ եկեղեցիներից մէկը։ Դեռ եկեղեցի չը հասած՝
առջևու անցնում էր մի թափօր։ Հետաքրքրուելով, ևս ոկտեցի
հետեւ։

Կատարւում էր մի կրօնական թէ ազգային թափօր։ Ամենից
առաջ զնում էին երաժիշտները՝ զանազան գործիքների վրայ
նուազելով, նրանց հետեւմ էին զգեստաւորաւած մանուկների
խմբեր Յ—7 տարեկան։ Թէ տղայ և թէ աղջիկ հազեւ էին սպիտակ
զգեստներ և վրաները կրում էին հրեշտակային թեեր ու պսակներ։ Մանուկների խմբերը իրենց ուսերի վրայ կրում էին փայտից թէ
մետաղից պատրաստած մանուկ Յիսուսի արձանը՝ չորեք հազցրած
և ձեռին էլ մի փոքրիկ կեղծ դառ բնած։ Մի այլ խումբ, որը
բազկացած էր աղջիկներից, տանում էր եկեղեցական անօթներ,
զրոշակներ և զանազան նկարներ։ Սրանց հետեւմ էին հարսանեաց
զգեստներ հազած, շրղարշների մէջ ծածկուած կոյսեր, որոնք իրենց
ուսերի վրայ կրում էին Աստուածածնի արձանը տիկնիկի ոլէս
հազցրած, պլիսին թագ, երեսը շղարշով պատած և զրկում փոքրիկ
Յիսուսին բռնած՝ դարձեալ չորեք հազցրած։ Սրանց յետից
զնում էր հասակաւոր տղաների մի խումբ, որը շալակած տանում
էր մի հոկայական խաչի վրայ բեեռած փայտեայ Քրիստոսին։
Սյստէս իրար անվերջ հետեւմ էին Զանազան զգեստաւորուած
խմբեր։ Ամենից վերջը զնում էին հոգեսրականները մի տխուր,
ներդաշնակ եղանակ երգելով։ Հոգեսրականները շրջադատել էին
մի հոկայական ամպհովանի, որի տակ դժուում էին զգեստաւ-
որուած երեք եղիսկոսոս (?), որոնցից մէկը ձեռքին բռնել էր
սկիբիր։ Թափօրն անցում էր վաղացներով։ անդ տեղ կանգ էր առ-
նում և որոշ արարողութիւններ կատարում։ Զանազան պատու-
հաններից, պատշղամբներից, գոներից, որոնց առջևով թափօրն
անցնում էր, մարդիկ ընդառաջ էին դուրս գալիս՝ վառ մուերը
ձեռքներին։

Մտադրուել էի այս թափօրին մինչև վերջը հետեւել, բայց երբ
մի եկեղեցի մտաւ և այնտեղ երկար ուշացաւ, ևս թողի, հեռացայ:

Կաթոլիկ այս թափօրը վրաս տարօրինակ տպաւորութիւն
թողեց, մանաւանդ զգեստաւորուած թափօրաւորները մանուկ
Քրիստոսի հաղցրած արձանով, Աստուածածնի արձաններով և այլն
Քրիստոնէական այս թափօրը ինձ յիշեցնել տուեց մեր հարեան
շիա թուրքերի «Ալիի սուզը»: Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ կա-
թոլիկ եկեղեցում սեղանի վրայ տեսայ նոյն զգեստաւորուած
Աստուածածինը, թազը զիխին և մանուկ Յիսուսը զլկում, զար-
ձեալ հաղին զգեստ: Այդ ամենը իմ համար անսովոր տարօրինա-
կութիւն էր, որովհետեւ արենելեան և յատկապէս հայ եկեղեցին նման
թափօրներ, Յիսուսի, Անտուածամօր և այլ սրբերի արձաններ
և այն էլ հաղուստով չի ընդունում:

(*zupunbuljh*)

2. **U**nowy **b**ug